

## ԳՐԱԿԱՆ

ԱՀԱՐՈՆԵԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ԱՐԺԷՔԸ\*)

(ԹՇՈՒԱՌՈՒԹԵԱՆ ՈՒ ՈՂԲԻ ԵՐԳԻՅՐ)

Բ.

Ա-ի խառնուածքը, Ա-ն որպէս ենթակայական գրող, Արտաքին և ինտուիտիւ փորձ, Ռեալիզ և ստեղծագործելու ձևը, Ա-ի տենդենցը և հետևանքը, Ա-ի երգած թշուառութիւնը, Ա-ի ցուցահանած աշխարհը, թուրք մասսան ըստ Ա-ի:

Մենք ուրուագծեցինք արդէն, թէ ինչ կերպ կազմակերպուեց ու զարգացաւ Ահարոնեանի հոգեկան աշխարհը և ինչ ձևով նրա տաղանդը ընտրեց թշուառութիւն երգելու ճանապարհը: Այժմ անցնենք խնդրի երկրորդ մասին՝ ստեղծագործած երկերի արժէքաւորման: Տեսնենք՝ որպէս մշակեց, ի մի ձուլեց իր առաջ դրած հսկայական աւերածութիւնների պատկերները, ինչպէս երգեց հայ ժողովրդի տառապանքները և ինչ եղանակով վերարտադրեց տաճկահայ միջավայրը, ժողովուրդն ու նրա ներկայացուցիչ տիպիկ բնաւորութիւնները:

Երբ հարց է լինում որևէ բանաստեղծի յառաջադրեալ նիւթի մասին՝ ապա ամենից առաջ հետևեալ խնդիրներն են հանդէս գալիս. ինչ խառնուածքի տէր է ինքը բանաստեղծը, գրական ուղղութիւններից որին է պատկանում նա և ինչպէս է վերաբերում իր նիւթին. արդեօք առարկայական ստեղծագործող է, թէ՛ ենթակայական, տենդենցող է, թէ՛ անտենդենց: Այս խնդիրների պարզաբանութիւնը հնարաւորութիւն կտայ վերոյիշեալ բոլոր հարցերի լուսաբանութեան:

\*) Տես «Արարատ» 1916 թ. յուլիս-օգոստոս:

Առաջին գլխում մատնանշեցինք արդէն, որ Ահարոնեանը զգայուն, տպաւորւող ու զգացմունքներով ապրող մի անհատ էր և պատկանում էր ռումանտիկ գրական ուղղութեան: Դրական այս դպրոցի բոլոր դրական թէ բացասական յատկութիւնների գումարն էր նա. աւելի վերջին՝ քան առաջին: Նրա երկերում, ինչպէս նաև ռումանտիկ գրականութեան մէջ, թէև բաւական խոշոր տեղ է բռնում իսկական, հարազատ կեանքը, բայց այդ հարազատութիւնը շատ հեռու է ռեալիզմի ուղին բռնելուց: Դուրս եկած միջավայրը մի անորոշ ու մութ զանգուած, ժողովուրդը անգոյն ու տարտամ, գործող անձինք ու տիպերը դժգոյն ու աղքատ բնութագծերով. ստեղծագործելիս մեծ մասամբ երևակայութիւնն է գերակշռում՝ քան իրական ապրումները. և հասկանալի է այս ու շատ բնորոշ: Ահարոնեանը, որպէս սենտիմենտալ-ռումանտիկ, ներքնապէս լալու հրամայողական պահանջն ունի: Իժգոհ բնութիւնից, իրենից, նա քնարերգում է մարդկային բախտի ոչնչութեան, աշխարհի ունայնութեան, մահուան, սարսափի, առւի կարկաչի, ծովի ալիքների, գիշերային մթութեան, քամու վայոցների մասին. նրա հոգին այդ բոլորի մէջ տեսնում է տառապանք, վիշտ, հեծեծանք, ճակատագրի անողոք որոշումներ, երևակայութեամբ լի մի խորհրդաւոր աշխարհ ու ագում: Նա գրում է զգայական այս խթանով և իրական կեանքը հետաքրքրում է նրան այն չափ, որչափ կարող է ողբի նիւթ մատակարարել, ներքին այդ պահանջին բաւարարութիւն տալ: Հեղինակը չի ստեղծագործում ցուցահանելու, հոգեբանութիւններ վերլուծելու համար, այլ՝ կարեկցութիւն, արգահատանք, միւս կողմից էլ վրէժխնդրութիւն, ատելութիւն զարթեցնելու գէպի իր գործող անձինք: Ահարոնեանի խառնուածքը ուրեմն կեանքը ուսումնասիրելու, մանրամասն քննելու տրամադրութիւն չունի, նա այնտեղ փնտռում է լալու աղբիւր՝ թշուառութիւն: Եւ եթէ տաճկահայ գաղթականութիւնը և կոտորածները չունենային ցնցող, յուզիչ ու ողբալի տեսք, ամենայն հաւանականութեամբ

Ահարոնեանի երկերում իրական կեանքն այնքան մեծ տեղ չէր բռնի:

Այդ Ահարոնեանի ստեղծագործելու պակասաւոր կողմերից մէկն է. նա առնթեր դրան՝ չունի առարկայական ստեղծագործման՝ ռեալիզմի արտաքին և ինտուիտիվ կազմակերպման աշխարհներ: Նա տենդենցիօզ է ու ծայրայեղ ենթակայական գրող: Ի՞նչ ենք հասկանում առաջին ու երկրորդ գաղափարների տակ:

Ռեալիզմի՝ օբեկտիվ ստեղծագործման միակ աղբիւրը, ինչպէս նաև բանաստեղծութեան ընդհանրապէս, հարազատ կեանքն է, նրա մէջ հանդէս եկած բիւրաւոր երեւոյթները, սօցեալական բիւրաւոր համախմբակցութիւնների ու մարդկանց գործառնութիւնները, «ակայն ռեալիստական ստեղծագործութիւնը իրականութեան իսկական կոպեան չէ: Ռեալիստ գեղագէտի տաղանդը մանրակրկիտ ուսումնասիրութեան է ենթարկում իւր միջավայրը, վերլուծում իրեն յուզող խնդիրները, ստանում այստեղից տպաւորութիւններ և ապրում հարազատութեամբ. ապա ինտուիտիվ եղանակով ընտրութիւն անում, կապակցում, զուգորդում այդ խնդիրները, խտացնում ու նոր հանգոյցներ ստեղծում նրա մէջ. և այս բանաստեղծական նիրհից յետոյ, հոգեկան երեւոյթների օբեկտիւանալու պահանջմամբ՝ հեղինակը վերարտադրում է երկը, տիպերի միջոցով ցուցահանում ապրած խնդիրները: Ստեղծագործման ընթացքին երկը չունի ուրիշ խթան, դրդիչ. ինքն է իւր ստեղծագործելու պատճառը, նա է, որ որպէս մի կազմակերպուած ու հարմոնիկ ամբողջութիւն՝ ձգտում է զատուել հեղինակի ես-ից:

Առարկայօրէն ստեղծագործելիս ուրեմն հեղինակը կատարում է երկու աշխատանք, մէկը՝ օբեկտիվ ինքնադիտողութիւն—արտաքին փորձ, միւսը՝ ինտուիտիվ կազմակերպում—սուբեկտիվ փորձ: Եւ որքան նա այս աշխատանքը կատարում է տաղանդաւոր ձևով, այնքան էլ նրա ստեղծած երկերը դառնում են արժէքաւոր ու բարձր: Առանց այս անհրաժեշտ աշխատանքի, որ նոր-

մայի բնոյթ ունի և բղխում է մեր հոգեբանական կազմից, թէ երկը և թէ դուրս եկած խաւերն ու գործող անձինք գեղարուեստական արժէք չեն ունենայ, լուծումները չեն բղխի հոգու այս կամ այն անյետաձգելի պատճառից, գործող անձինք չեն ցուցանի հոգու բնական կազմակերպման առնթեր գեղարուեստական խտացումներ:

Այս աշխատանքը, կազմակերպման այս երկտարր աշխարհն է, որ պակասում է մեր հեղինակին: Նա ենթակայական գրող է, նրան որպէս պատմողի, վիպասանի ու դրամատուրգի պակասում է արտաքին դիտողութիւնը, նրա ինտուիտիւ կազմակերպման աշխարհը նեղ է ու թահմանափակ, որովհետեւ որպէս լիւրիկ իր ներքին տրամադրական ստեղծագործութիւններէ կապակցմամբ ու վերլուծութեամբ է զբաղւում միայն: Նրա ստեղծագործութիւնները իրենք իրենց պատճառ չեն, այլ հետեանք տենդենցիայի. նա քարոզիչ է, հրապարակախօս և ոչ անտենդենց առարկայական ստեղծագործող. ուստի նրա երկերի մէջ շօշափած խնդիրները, գործող անձանց արարքները, լուծումները ծնունդ են առնում ոչ թէ դուրս եկած խաւերի խմբակցական կեանքից, հոգիների ներքին կռիւներից, ապրումներից, խթաններից՝ այլ հեղինակի ընդհանուր տենդենցիայից, այն իշխող գաղափարից, որ հեղինակը պատրաստ ունի իր առաջ, նախքան երկի ստեղծագործութիւնը, և որի տեսակէտից վերարտադրում, ստեղծում է նա ինտուիցայով կազմակերպած նիւթը:

Տենդենցիան գեղարուեստական տեսակէտից հոգեբանական բաց է, այն հնարաւորութիւն չի տալիս իւրաքանչիւր գործող անձի իր բնական կարողութիւններով հանդէս գալու, որովհետեւ նրանք հարկադրուած են ամենուրեք տենդենցիայի շապիկը հագնելու, նրա ազդեցութիւնը կրելու, այն պարզելու, ցուցահանելու:

Եթէ ամփոփելու լինենք մեր վերեւ ասածները, կըստանանք այն, որ Ահարոնեանի պակասումը կողմերը, որոնք շեղել են նրա տաղանդը գեղարուեստական ուղին թռնելուց՝ երկուսն են. հիւանդագին ռումանտիզմ և ան-

տենդենց առարկայական ստեղծագործութեան արտաքին ու ներքին փորձերի բացակայութիւն։ Այս երկու խոշոր բացերը ոչ միայն Ահարոնեանին, այլ և շատ աւելի մեծ տաղանդների արգելք կհանդիսանային աւելի բարձրանալու, ստեղծագործական մեծ շրջաններ թեւակոխելու. ինչպէս և արգելեցին։

Ահարոնեանը իր այդ պակասաւոր կողմերը դրական գործունէութեան ամբողջ ընթացքում չուղղեց, այդ պատճառով և յառաջադրեալ նիւթը չկարողացաւ մշակել ու խորանալ նրա մէջ։ Տաճկահայ աւերածութիւնների պատկերները միշտ էլ մնացին որպէս անորոշ ֆոն երեւակայական թռչեքներով գունաւորուած ու շինծու հանգոյցներով կապակցուած։ Բազմաթիւ օրինակներից բերենք մի երկուսը (Ռաշիդ-բանոնի կոտորածը 162—72. Սեօրեր—Գ.... գիւղի աւերածութիւնը)։ Թշուառութիւնը Ահարոնեանի համար դարձաւ մի օրինակ ողբի ու լիրիկայի աղբիւր և ոչ ստեղծագործելու, վերարտադրելու աշխարհ։ Նրա երկերը կարդալիս՝ ուսումնասիրած տիպերի գործողութեանց, հոգեկան գալարումների մէջ չէ, որ տեսնում ենք վիշտ, տառապանք, ողբ։ Տաճկահայ տառապանքի մասին ինքը երկերում դուրս եկած ժողովուրդը չէ, որ խնդում է, լալիս, ագում է, հեծեծում. նա չէ, որ պատմում է, բաց անում անարդարութեան ու սարսափի տակ իւր կծկուած հոգու ծալքերը. նա չէ իր հոգին քրքրողը ու գործողութեամբ ի ցոյց հանողը. հեղինակը զրկել է նրանց բոլորին այդ գործունէութիւնից և ինքն ստանձնել նոցա դերը։ Սրանով չենք ուզում ասել՝ թէ հեղինակը անմասն պիտի մնայ իր երկերում գործող անձանց ներքին ապրումներին, արարքներին.— ոչ, որովհետեւ երկը վերջի վերջոյ մնում է որպէս հեղինակի մի ապրած վիճակ։ Ընդհակառակը անհրաժեշտ է, որ ինչպէս ամեն մի տաղանդաւոր հեղինակ, նոյնպէս և Ահարոնեանը թափանցէր բոլոր գործող անձանց հոգու ներսը, ըմբռնէր նրանց բնաւորութեան ինքնայատուկ ու բնորոշ գծերը, հասկանար ու վերլուծէր վերարտադրելի միջավայրը ու նրա հոգեբանու-

թիւնը. իհարկէ նախքան երկի ստեղծագործութիւնը: Մինչև այստեղ հեղինակը անողոք անդամահատողի դերում, ակտիւ գործունէութեան շրջանում է գտնուում Բայց վերաբարձրելիս արդէն ինքը պիտի պահուի այս բոլորի յետևը, ապրած խնդիրները պատկերացնի իր այս կամ այն տիպի մէջ և վերջիններս հասարակ բերի պատմելու, ի ցոյց հանելու հասարակութեան՝ իրենց ըմբռնումներին, մտաւոր կարողութեան չափ՝ իրենց խինդն ու ցաւը իրենց արարքներով:

Ահարոնեանը որպէս օրեկտիւ ինքնադիտողութիւնից, արտաքին փորձից զուրկ հեղինակ, բնականօրէն չէր էլ կարող ունենալ վերոյիշեալ անհրաժեշտ տուեալները և նրանցից օգտուել, քանի որ, ինչպէս ասացինք, նա կեանքը, հետևապէս անհատ անձնաւորութիւնները ուսումնասիրելու ներքին հրամայողական պահանջը չունի, որպէս հիւանդոտ ուսմանտիկ: Նա ինքն է ամենուրէք շրջում իր միօրինակ լիրիկայով: Նրա երկերում երեխան թէ հասակաւորը, մեծատունը թէ աղքատը, կինը թէ մարդը իրենց թշուառութիւնը մի ձևով են ապրում, դա Ահարոնեանի ապրելու ձևն է, նրա սեպհական քնարերգութիւնը: Այդ է պատճառը, որ մեր հեղինակի բոլոր երկերում երգած թշուառութիւնը, ողբը աղքատ է ու սահմանափակ, միօրինակ ու ձանձրալի:

Մեր վերև ասածները հառտատելու համար բերենք շատ օրինակներից մի նմուշ: Աշուղ պատմուածքի մէջ հասարակ պարզ ըմբռնումներով աշուղը ողբում է իրեն միանգամայն անհամապատասխան ու անհասկանալի եղանակով՝

«Ես էլ ցաւի դաշը կապեմ քամու հետ  
Եւ արցունքի երգեր հիւսենք միասին,  
Նա խաղում է ամպրոպների շանթի հետ՝  
Նա յոյզ ու բոց կտայ նաև մեր երգին.  
Կոյր աշուղը, մրրկաշունչ խօլ քամին  
Կպատմեն ձեզ տառապանքներն աշխարհին,  
Ունա՛, քամի, հազար ու մի ձայներով,

Թող սարսուռան լեռներ, ձորեր անդունդներ,  
 Անցիր մէկ մէկ դիակների վրայով  
 Լիզիր վերքեր ու հաւաքիր հառաչներ,  
 Ի՞նչ ես վազում աննպատակ դէպ հեռուն,  
 Հառաչանքներ, խո՛ր, խո՛ր ցաւեր շալակած,  
 Վեր սլացիր դէպի երկինքը անհուն,  
 Գտիր գահը, ուր բազմած է մի Աստուած,  
 Թէ անդօր է սրբել արցունքն աշխարհում,  
 Գահ էլ պէտք չէ, և ոչ արցունք աշխարհում,  
 Վազիր վրան ահեղաշունչ որոտով,  
 Թողիր գահը դողայ հիմքից, և Աստուած,  
 Թող երկինքը մթնի իր վառ աստղերով,  
 Տիեզերքը դառնայ քաօս, աւերակ:

Նոյնը կհաստատեն նաև հետևեալ հատուածները. (Բախտի խաղեր—Պետոյի վիշտը, Մայրերը—Սուսանի տանջանքները, Արցունքի հովիտը—Ասլանի, Նազէի և Հիւրիի ողբերը):

Երգած թշուառութեան նման աղքատ ու միօրինակ է Ահարոնեանի ցուցադրած տաճկահայ միջավայրն ու ժողովուրդը. քանի որ նա չի եղել տաճկաստանում, չի դիտել և ուսումնասիրել այնտեղի դրութիւնը, պայմանները: Այլ այդ բոլորի մասին գրել է կամ լսելով և կամ գաղթականների կեանքի վրայ հիմնուելով:

Անտես առնելով իրական կեանքի ուսումնասիրութիւնը, հետևապէս և առարկայօրէն ստեղծագործելու եղանակը, հեղինակը առաջ է քաշում իր անհատականութեան ուժեղ շեշտն ու վրէժխնդրութեան տենդենցիան և այդ տեսակէտից խտացնում, գունաւորում, իրականից տարբեր շունչ ու հոգի է փչում իր զօրեղ երևակայութեամբ քիւրդ—թուրք և Հայ հատուածին:

Տաճկահայ միջավայրը ըստ Ահարոնեանի պատկերանում է մեղ բնական տնտեսութեամբ ապրող մի սօցիալական խումբ, որտեղ իշխում է քմահաճոյքը: Օրէնքը, արդարութիւնը, պատիւը սրի ծայրին՝ ոյժն է ամենուրէք թագաւորող սկզբունքը: Անձի, գոյքի, ընտանիքի, պատւոյ ապահովութիւն գոյութիւն չունի:

Այդ միջավայրում իրար հակընդէմ կանգնած են երկու տարբեր հոգեկան ըմբռնումների, տարբեր բնաւորութեան և ներքին կազմակերպուած աշխարհի տէր թուրք-քիւրդ մասսա և Հայ ժողովուրդ, երկու տարբեր հատուածների ուսումնասիրութիւնն էլ հարազատ գծերի հետ՝ ցուցահանում է ընդհանրապէս մի երևակայական, անիրական աշխարհ: Այս կամ այն ժողովուրդը յաճախ շարժւում, գործում, ընկնում, բարձրանում է ոչ իւր օրհալական կեանքի, հոգեբանութեան ու անփորոյթի հրամայողական պահանջից, այլ հեղինակի վրիժառութեան տենդենցիայից: Ժողովուրդների երկու խմբակցութեանն էլ գործելու խթան տւողը հեղինակի վերոյիշեալ տենդենցն է, գիմադրութիւն, հականերգործումն առաջացնելու քարոզը:

Ճիշտ է թուրք ու քիւրդ տարրը ճաճկաստանում, որպէս իրաւատէր անձն, բիրտ է եղել ու անգութ, հայատեաց, ու մոլեռանդ, ծոյլ ու հայի հաշուով ապրող, ինչպէս գուրս է բերել Ահարոնեանը, բայց և այնպէս թուրք ու քիւրդ տարրն էլ, որպէս զգայուն մարդկանց գումար, ունեցել է բարի, ազնիւ, առաքինի կողմեր, որոնք հեղինակը անտես է առել իր յայտնի տենդենցի՝ վրէժխնդրութեան պատճառով:

Այստեղ կարող է այն միտքը յառաջ գալ, թէ ուրեմն բանաստեղծը չպիտի վերաբառարի բացարձակ բացասական կամ դրական տիպեր, որովհետեւ դրանք իրականութեան մէջ բացասականի հետ ունեն գրական գծեր և ընդհակառակը:

Խօսքը այն մասին չէ, թէ այս ու այն ժողովուրդը, կամ նրանց հաւաքական հոգեբանութեան արտայայտիչ այս ու այն տիպը իրականութեան մէջ վերոյիշեալ գծերից ո՞րն ունեն, այլ այն մասին՝ թէ հեղինակը ժողովուրդների կենցաղն ու հոգին ցուցադրելիս, տիպեր ստեղծագործելիս գեղարուեստական ճշմարտի ուղիով է գնացել, թէ հրապարակախօսական տենդենցին ունկնդրելի Գեղարուեստական ճշմարտի ուղիով ընթացող հեղինակը

իր ամեն մի քայլը պիտի հիմնաւորի հոգեբանօրէն՝ հաւատարիմ մնալով գեղարուեստական երկի շափին ու ներդաշնակութեան:

Թուրք ու Քիւրդ բէգերը թէ ժողովուրդը միշտ նենգաւոր, խաբեքայ, հայի ընտանեկան պատիւն արատաւորող ու գոյքը, աշխատանքը սեպհականող, բարեկամական դաշինքները կեղծ ու խարդախ. ահա այն գծերը, որ հեղինակը ուժգինս գունաւորել, խտացրել երեւակայութեամբ և հանդէս բերել ուրուագծելու. Թուրք ու Քիւրդ մասնան. (Արցունքի հովիտը — Իշխանի արարքները, Սև օրեր — Նաբօի և եղբօր արարքները, Դարաւոր կաղնին — Ամին բէգի գործունէութիւնը և այլն):

Ահարոնեանը միջավայրի այս մասը վերարտադրել է ընդհանուր, տարտամ կողմերով: Նա չի փորձել հանրականը եղակիի, մասնայականը անհատ տիպերի մէջ տալ, տարբեր տիպեր ստեղծել, այլ բաւականացել է ամենքին յատուկ գծերի արձանագրութեամբ: Նրա երկերի մէջ դրսեւորւում է ժողովուրդների հանրային կենցաղի արտաքին տեսքը, կեղևը: Հեղինակը երբեք չի փորձում բացել կեղևի ներսի բովանդակութիւնը, մեզ բոլորիս անյայտ յոյզերի, տենչերի, կամեցողութեան աշխարհները: հոգիների ներքին դաւերի, որոգայթների անկիւնները: Չնայած այս ծայրայեղ միակողմանիութեան, Ահարոնեանի երկերում դուրս եկած Քիւրդ ու Թուրք տարրը համեմատած միւս տարրերի հետ բաւական պարզ է ցուցահանում իր բնաւորութիւնը, հոգու ըմբռնումները, պահանջներն ու սովորոյթը: Թէև վերոյիշեալ գծերը պայծառ գոյներով չեն ցուցադրուած գեղարուեստական ճշմարտի տեսակէտից, բայց և այնպէս ընթերցողը կասկած չունի կարգալիս, որ իր առաջ կանգնածը Թուրք ու Քիւրդ ժողովուրդն է իր հոգեկան կազմակերպութեամբ:

Ե. Հայրապետեան

(Եսարունակելի)